ՊՐՈՖ. Մ. Ա. ՌԵՅԶՄԱՆ

ԿԱՇՎԻ ԲՈՒՍԴԵՄ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԵԼ

619
Ռ-32

ՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1936

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

0 4 AUG 2010

619
Ռ-32
սգ'

ՊՐՈՖ. Մ. Ա. ՌԵՑՔՄԱՆ

ԿԱՇՎԻ ԲՈՒԻ ԴԵՄ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԵԼ

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1936 ԵՐԵՎԱՆ

նա ինչպես է ապրում, ինչպես է բազմանում և ինչ կերպ է վնասում կենդանուն։ Թշնամուն հաղթելու համար պետք է նրան լավ ճանաչել։

Այստեղ մենք կպատմենք բոռի կյանքի և նրա բազմացման մասին։

Խոշոր յեղջյուրավոր անասունների վրա յերկու տեսակի բոռ է հարձակվում. 1) «յեզան բոռը» և 2) «խոշոր յեղջյուրավոր անասունների բոռը»։

Բոռի այս յերկու տեսակն էլ իրար շատ նման են, վորի համար էլ մեր նկարագրությունը յերկուսին է վերաբերում։ Միակ տարբերությունը, վոր պիտի նշել, այն է, վոր «յեզան բոռը» միայն մի ձու յե դնում, իսկ «խոշոր յեղջյուրավոր անասունների բոռը»՝ միանգամից մի քանիսը (5 մինչև 20 հատ)։

Բոռի թռչելն ու կենդանիների վրա հարձակվելն ամենուրեք միատեսակ չե։ Կարելի յե ասել, վոր բոռը կենդանիների վրա հարձակվում է այն ժամանակ, յերբ տվյալ վայրում կատարելապես ամառային յեղանակ է, վորը հարավային շրջաններում լինում է մայիս և հունիս ամիսներին, իսկ հյուսիսային շրջաններում՝ հուլիս և ոգոստոս ամիսներին։

Այս ժամանակամիջոցին էգ բոռն աշխատում է անկատելի կերպով մոտենալ հոտին՝ անասունների վրա ձվիկներ դնելու համար։

Բոռն իր ձվերը դնում է գլխավորապես կենդանու յետևի վոտքերի բարկանների (վեգ) մոտ։ Յերբեմն բոռը ձու յե դնում նաև մարմնի այլ մասերում, որինակ՝ կողքերում և ճակատներում։

Էգ բոռն իր ձվերը (նկ. 1) ամրացնում է կենդանու մազերի վրա։ Ձվերը բաց-դեղնավուն են և ունեն մոտ յերեք քառորդ միլիմետր յերկարություն, վորի պատճառով էլ բավական դժվար է պարզ աչքով նրանց տեսնել։

Յերեք-չորս որից հետո ձվից թրթուր է դուրս գալիս, վոր մոտավորապես ձվի չափ է (նրանից մի քիչ փոքր). թրթուրը կաշին ծակելով մտնում է կենդանու որգանիզմի մեջ։

Նկ. 1. Մազերին կպած՝ բոռի ձվիկները

A) «յեղջյուրավոր անասունների բոռ»-ի մի քանի ձվիկ՝ մազին կպած. B) մազի վրա «յեզան բոռ»-ի մի ձվիկ. C) թրթուրը ձվից դուրս է գալիս։

Չնայած, վոր էգ բոռն աշխատում է աննկատելի կերպով մոտենալ կենդանուն, այնուամենայնիվ կենդանին զգում է իր թշնամու մոտենալը, անհանգստանում և աշխատում է նրանից խուսափել։ Յերբեմն նախիրը մտնում է ջուրը կամ վազում է դեպի անտառ և ընդհանրապես դեպի զով և ստվերոտ տեղեր՝ իր թշնամուց ազատվելու համար։

Բոռի հարձակվելու նկատմամբ կենդանու ունեցած այս վերաբերմունքը կարող է տարորինակ և անհասկանալի թվալ, վորովհետև բոռը ձու դնելիս կենդանուն առանձին ցավ չի պատճառում. նա վոչ խայթում է և վոչ էլ կծում. բոռը խայթոց չունի և քերանը զարգացած չե։ Բոռի յերկյուղը հատուկ է վոչ միայն չափահաս անասուններին, այլև մատղաշներին, և այդ բնազդը հավանաբար առաջացել է կենդանիների մեջ շատ ու շատ դարերի ընթացքում։

Բոռի թրթուրը մտնելով կաշվի տակ՝ ավելի խորն է անցնում ու սկսում է իր յերկար տեղափոխությունները։ Կենդանու մարմնի մեջ թրթուրը մի շարք ձևափոխությունների յե յենթարկվում, աճում, մեծանում է և մոտավորապես 9 ամիս հետո կենդանու հյուսվածքների միջով անցնում է կաշվի տակ, դուրս է գալիս գլխավորապես մեջքից (նկ. 2)։

Թրթուրի վերոհիշյալ տեղափոխությունները շատ վատ



Նկ. 2. Բոռի թրթուրի տեղափոխությունը կովի մարմնի մեջ։ Թրթուրը կովի հետևի վոտքից փորի վրայով գնում է դեպի վիզը, իսկ այնտեղից՝ յետ, և վերև՝ դեպի մեջքը։

են ազդում կենդանու վրա։ Վերջին տեղափոխման ժամանակ, յերբ թրթուրը մարմնից դուրս է գալիս, կաշվի տակ շատ մեծ խորշեր են գոյանում (նկ. 3), վորոնք դրսից ուռուցքի նման են լինում և հեշտությամբ կարելի յե ձեռքով շոշափել ու աչքով տեսնել։ Այդ ժամանակ թրթուրն

իր ամենահաստուն հատակումն է լինում և մոտավորապես 15 մմ յերկարություն և 10 մմ հաստություն է ունենում (նկ. 4)։

Նկ. 3. Կենդանու մորթու տակի ուռուցքը։ Ուռուցքում յերևում է թրթուրը։

Թրթուրը շուտով կաշին ծակում է և այդ անցքի միջով շնչում։ Նա սնվում է այն թարախով, վոր իր նստած ուռուցքի մեջ շատ կա։

Յերբ անցքը բավականին մեծանում է, թրթուրը դուրս է գալիս, ընկնում է գետին, հետո մտնում է խոտերի մեջ կամ իր համար մի ուրիշ պատսպարան է գտնում, իսկ

Նկ. 4. «Յեղան բոռ»-ի թրթուրը։

Նկ. 5. Հարսնյակի պատյանը, վորից դուրս է յեկել բոռի ճանճը։

յերբեմն էլ մտնում է խոտերի մեջ։ Այնտեղ նրա թաղանթն ամրանում է և նա դառնում է հարսնյակ (նկ. 5)։

Բոռը՝ հարսնյակի վիճակում մնում է 30—40 որ, վերջից հետո հարսնյակից դուրս է գալիս հասունացած, մեղվի նման մի միջատ (բոռ) (նկ. 6)։

Հասունացած ճանճը՝ բոռը, ապրում է 20—25 որից

Նկ. 6. Եգ բոռի ճանճը։

վոչ ավելի։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում նա (հարսնյակի նման) վոչ ուտում է, վոչ էլ խմում և ապրում է սննդի այն պաշարով, որ ամբարել է իր մարմնի մեջ դեռ



Նկ. 7. Բոռի զարգացումն ըստ ամիսների։

թրթուր ժամանակ։ Ճանճ դառնալուց հետո բոռերը շուտով զուգավորվում են և մի քանի օրից հետո ձու յեն դնում։ Յուրաքանչյուր եգ բոռը կարող է մինչև 500 ձու դնել։

Ահա թե ի՛նչ ձևով է կատարվում փլասատու բոռի զարգացումը (նկ. 7)։

Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ամեն մի ձվից կենսունակ թրթուր դուրս չի գալիս, և թրթուրների մոտավորապես կեսը վոչնչանում ու չի կարողանում կաշին ծակել և մտնել մարմնի մեջ։ Սակայն պետք է շեշտել, որ մեր անասնապահությանը և վողջ ժողովրդական տնտեսությանը հսկայական փլաս հասցնելու համար մնացած կենսունակ մասն էլ բավական է։

ԲՈՌԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Բոռն ի՞նչ փլաս է պատճառում։

1. Ինչպես վերևում ասվեց, յերբ բոռը ձու յե դնում, կենդանիները նրանից փախչում մտնում են ջրի մեջ ու ամբողջ որերով կանգնած մնում այնտեղ, իսկ յեթե մոտակայքում ջուր չկա, կենդանիներն արոտի մի ծայրից մյուսն են վազվզում, քրտնում, փրփուրը բերանին հարձակվում ջրի վրա ու չափից ավելի խմում և իրենց որգանիզմը սառեցնում, որից և առաջանում են ամեն տեսակ հիվանդություններ։

Լեռնային վայրերում կենդանիները բոռից փախչելով՝ ժայռի ու քարափի մտիկ չեն տալիս, ցած են թռչում ու հաճախ վոտքերը կոտրում, իսկ հղի կովերը վիժում են։

2. Ձվից դուրս յեկած թրթուրները կենդանու կաշին

ծակելով որգանիզմի մեջ մտնելիս առաջ են բերում հիվանդոտ ու թեթև գրգիռներ, որից փոքրիկ վերք է գոյանում և սկսում է արյունաջուր հոսել։

Կենդանիների ներքին որգանների միջով տեղափոխվելիս թրթուրները փլասում են այն։

Յերբ թրթուրը վերջնականապես հասունանում է, այսինքն՝ հասնում է իր զարգացման վերջին շրջանին և անցնում է կաշվի տակ, այնտեղ, ինչպես վերն ասել ենք, խորշեր են առաջանում, որոնց մեջ թարախ է հավաքվում։ Մինչև ուռուցքի ծակվելը թարախը դուրս գալու տեղ չի ունենում, մնում է մարմնի մեջ և վատացնում կենդանու առողջությունը։

Նկ. 8. Վնասված կաշի։

3. Գիտնականների և տնտեսավարների դիտողություններով, բոռից կենդանիները նիհարում են և նրանց քաշը պակասում է մոտավորապես 10 կգ-ով, իսկ կաթնատվությունը 10—12%-ով։

4. Այդպիսի կենդանուց մաշված մորթին մեծ թվով ծակեր է ունենում, որոնք դասավորված են լինում գլխավորապես մեջքի վրա, այսինքն՝ մորթու ամենաթանգարժեք մասում։ Վնասված մորթուց հնարավոր չի լինում անհրաժեշտ ձևումներ կատարել, որի պատճառով այդպիսի մորթին համարվում է խոտան (նկ. 8)։

Մենք արդեն ասել ենք, որ բոռը կաշվի արդյունաբերությանը շատ ու շատ միլիոնների փլաս է պատճառում։

Առանց չափազանցելու կարելի է ասել, որ բոռի հասցրած վնասի պատճառով կոշկի արտադրանքը տարեկան 3—4 միլիոն զույգ պակսում է։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ծակոտված կաշի գնելիս շատ ավելի պակաս են վճարում, քան նորմալ կաշվի համար, այնպես, որ կաշվի տերը բավականաչափ վնասվում է։

Մի-երկու օրինակ բերենք, որոնցից կերևա, թե որքան մեծ են բոռի հասցրած վնասները։

1. Սարատովի մարզի Կամիշինի խորհտնտեսությունն ստուգելով իր անասուններին՝ պարզել է, որ 7886 գլուխ անասունից 2785 գլուխը բոռով վարակված են եղել։ Խորհտնտեսությունը հաշվել է այն վնասները, որ նա կրելու է բոռից։ Պարզվել է, որ միայն կաշվի վնասը 16,185 ռուբլու է հասնում, իսկ մսի ու կաթի վնասը կազմում է մոտ 49,000 ռուբլի։

2. Լենինգրադի մարզի մի ուրիշ խորհտնտեսություն՝ «Դրուժնոսելյե» անունով, նույնպես հաշվել է բոռի պատճառած վնասները։ Պարզվել է, որ բոռի պատճառով անասունների կաթնատվությունը պակսում է 10%-ով, կաշիների արժեքը՝ 40%-ով, և կովերը միջին հաշվով իրենց քաշից կորցնում են 6 կիլոգրամ։ Այս խորհտնտեսություններում հաշվել են, որ մի կովն որական միջին հաշվով 7 լիտր կաթ է տալիս, նշանակում է՝ մեկ ամսվա ընթացքում—ապրիլի մեկից մինչև մայիս — ամեն մի կովից պետք է ստացվեր 210 լիտր կաթ, այնինչ բոռից վնասված անասուններն ամսական 21 լիտր կաթ պակաս են տվել։ Ուրեմն, 21 լիտր կաթ պակաս է տվել մի կով, իսկ ինչ թիվ կստացվի, եթե այդ 21 լիտրը բազմապատկենք վնասված կովերի թվով։

ԲՈՌԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՆ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԻ

Վերևում նկարագրած դրությունը պահանջում է բոռի դեմ ամենավճռական պայքար մղելու անհրաժեշտություն։ Եվրոպական զանազան յերկրներում արդեն տարիներ շարունակ պայքար է մղվում բոռի դեմ, որի շնորհիվ բավականին նվազել է անասունների վարակվածությունը բոռով և, պարզ է, նվազել է նաև բոռի պատճառած վնասը։

Հաշվի առնելով այն անհագին վնասը, որ հասցնում է բոռը ժողովրդական տնտեսությանը՝ ԽՍՀՄ ԺողԿոմ-խորհը 1931 թվի նոյեմբերի 13-ի իր որոշումով անասնատերերին պարտավորեցնում է սիստեմատիկ ու կանոնավոր պայքար մղել բոռի դեմ։ Հենց այդ պատճառով էլ մեզ մոտ պլանային աշխատանք է կատարվում անասուններին բոռի թրթուրներից մաքրելու ուղղությամբ։

Այդ աշխատանքի կազմակերպական ու տեխնիկական մի շարք թերությունների հետևանքով, ձեռք բերած արդյունքները դեռևս բավարար համարել չի կարելի, թեև անասունների վարակվածությունը որոշ չափով պակսել է։

Ամեն տարի սիստեմատիկ ու պլանային աշխատանք կատարելու, ամբողջ Միության մեջ անասունների վարակը վերացնելու միջոցով բոլոր շրջաններում, անկասկած, կարելի է բոռի պատճառած վնասները նվազագույնի հասցնել և բոռը հազվագյուտ յերևույթ դարձնել։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր լավագույն արդյունքի կարելի կլինի հասնել միայն այն ժամանակ, յերբ բոռից մաքրվեն վոչ միայն կազմակերպված սեկտորի (խորհտնտեսություններ, կոլտնտեսություններ, ֆերմաներ և այլն) անասունները, այլև մենատնտեսներինն ու կոլտնտեսականներինը, վոր բավականին մեծ թիվ են կազմում։

Այսպիսով բոռի դեմ տարվելիք պլանային պայքարը լայն ծավալ պետք է ստանա։ Կազմակերպվում են բոռի դեմ պայքարող բարձր, միջին և ստորին տեխնիկական պերսոնալ պատրաստող հատուկ դասընթացներ, ինչպես նաև կարճատև դասընթացներ՝ կթվորների, անասուն խնամողների, գյուղխորհուրդների անդամների, անասնապահական սեկցիաների ղեկավարների և վորակին հետևող՝ կոլտընտեսությունների տեսուչների համար։ Կաշվի բոռի դեմ մղվող պայքարը սուր բնույթ պետք է ստանա։

Այսպիսով կարելի յե հուսալ, վոր միասնական պլանով հնարավոր կլինի մեծ արդյունքների հասնել։

Ըստ Հողժողկոմատի Անասնաբուժական Վարչության վերջին կարգադրությունների, 1936 թ. հետևյալ միջոցներն են ձեռնարկվելու։

Հանրապետություններում, մարզերում, յերկրամասերում կատարվող բոլոր աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը դրվում է անասնաբուժական վարչության վրա, իսկ շրջանների աշխատանքների ղեկավարությունը՝ շրջանասնաբուժների վրա։

Թրթուրների վոչնչացման աշխատանքների անմիջական ղեկավար հանդիսանալու յե անասնաբուժական կայանների և տնտեսությունների անասնաբուժական պերսոնալը։

Տնտեսությունների անասնաբուժ. պերսոնալը պարտավոր է գյուղխորհրդի կամ շրջգործկոմի հաստատած պլանը՝ բոռի դեմ տարվող պայքարի միջոցառումների մասին՝ համաձայնեցնել շրջանասնաբուժի հետ, վորը շարունակ պետք է տեղյակ լինի, թե բոռի դեմ պայքարելու ուղղությամբ իր շրջանում ինչ աշխատանքներ են կատարվում։

Խորհտնտեսություններում բոռի թրթուրներն անմիջապես վոչնչացնում են անասնաբուժակները կամ սանիտարները, իսկ ԿԱԾ-երում և կոլտնտեսականների չհամայնացրած հոտերում՝ կթվորները, տավարապահներն ու հովիվները՝ անասնաբուժ. սանիտարների ղեկավարությամբ։

Անհատական սեկտորում այս աշխատանքը կատարում են հովիվները, կամ իրենք՝ անասնատերերը՝ գյուղխորհրդի նշանակած հատուկ մարդկանց հսկողությամբ, վորոնք ավարտած պետք է լինեն անասնաբուժական կայանին առընթեր գոյություն ունեցող՝ բոռի դեմ պայքարելու դասընթացները։

Բոռի դեմ պայքարելու պլանի կատարման և աշխատանքների բարձր վորակի համար պատասխանատվությունը խորհտնտեսություններում դրվում է դիրեկտորների վրա, կոլտնտեսություններում՝ նախագահների, իսկ անհատական սեկտորներում՝ անասնատերերի։

Մեծ ուշադրություն պետք է դարձնել մենատնտեսների անասունները մաքրելու գործին, վորովհետև, յեթե այդ սեկտորի անասուններն առանց մաքրելու մնան կամ բավականաչափ լավ չմաքրվեն, ամբողջ աշխատանքի արտադրանքը, նույնիսկ հանրայնացված սեկտորինը, զգալի չափով կնվազի։

Անհատապես կոլտնտեսականներին պատկանող անա-

սունները կանոնավոր ու պլանային ձևով մաքրելու համար անհրաժեշտ է կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներում իրազեկ դարձնել անասնատերերին, վոր նրանք պարտավոր են իրենց անասունները բոռի թրթուրներից մաքրել։

Այս բոլոր միջոցառումներով հնարավորություն կլինի շատ մեծ արդյունք ստանալ։ Բայց ավելի ևս մեծ հաջողություն կարելի չե ունենալ այն դեպքում, յերբ այս վոզջ աշխատանքը միաժամանակ թե հասարակական կազմակերպությունների և թե շահագրգռված տնտեսական մարմինների՝ Սոյուզզագոտկոժի, սոյուզմյասոյի, սոյուզմոլոկոյի և սոյուզզագոտսկոտի մշտական և անդուլ հսկողության տակ լինի։

Կոնկրետ կերպով ինչպես է արտահայտվելու հասարակական և տնտեսական կազմակերպությունների ոգնությունը։

Հասարակական և տնտեսական կազմակերպությունները մարտ, ապրիլ և մայիս ամիսներին լայն բացատրական աշխատանք պետք է կատարեն։ Նրանք պետք է հետևվեն, վոր բոռի դեմ պայքարելու հարցը մինչև ամառնամուտ քննված լինի թե կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներում և թե մենատնտեսների հատուկ ժողովներում։ Հասարակական և տնտեսական կազմակերպություններն այդ ժողովները հրավիրելու նախաձեռնողներ պետք է լինեն։

Բացի դրանից, նրանք իրենց գյուղական մթերողների միջոցով միս, կաթ և անասուն մթերելիս նաև բացատրական աշխատանք պետք է կատարեն։ Տնտեսական հիմնարկների գործակալներն անասնատերերին կոնկրետ օրինակներով պետք է ցույց տան այն վնասը, վոր բոռն է պատճառում նրանց՝ փչացնելով կաշին, միսը և այլն։

Յեթե հասարակական և տնտեսական կազմակերպություններն անմիջականորեն մասնակցեն բոռի դեմ ժողող պայքարին, ապա կարելի կլինի յենթադրել, վոր գործի հաջողությունն ապահովված է։

Այստեղ մենք պայքար կազմակերպելու վերաբերյալ միայն ընդհանուր դատողություններ կտանք, իսկ պայքարի ավելի պարզ ձևերի մասին կխոսենք այս գրքույկի հավելվածում, վորտեղ ցույց է տրված Լենինգրադի մարզում հաջողությամբ գործադրվող կազմակերպական սխեման։

ԲՈՌԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բոռի դեմ ինչպես պետք է պայքարել։

Բոռի դեմ պայքարելու ամենամատչելի և ռացիոնալ միջոցները հետևյալներն են.

1. Թրթուրները դուրս սեղմելն ու վոչնչացնելը.
2. դեղորայք քսելը.
3. դեղորայք սրսկելը։

Դուրս սեղմելը.—Առաջին ձև. դուրս սեղմելն այսպես է կատարվում. կենդանուն կապում են։ Նախքան թրթուրները դուրս սեղմելը, բոլոր անասուններին ուշադրությամբ քննում են և հայտաբերած բոլոր ուռուցքների վրայի մազը խուզում։ Յեթե ուռուցքը բավականաչափ մեծ անցք ունի, սկսում են սեղմել՝ թրթուրները դուրս հանելու համար (նկ. 9)։

Նախքան սեղմելը, անցքը պետք է մաքրել և թարախը հեռացնել։ Այնուհետև յերկու ձեռքի բթամատով ու ցուցամատով միաժամանակ հուպ են տալիս ուռուցքի բոլորքն ու այսպիսով թրթուրը մոտեցնում ուռուցքի անցքին։

Յերբ թրթուրն ուռուցքի անցքից յերևում է, ուռուցքը մեկ էլ են հուպ տալիս, և թրթուրն անցքից դուրս է գալիս, վորից հետո ձեռքով կամ ունելիով բռնում—դուրս են քաշում (նկ. 10)։



Նկ. 9. Ձեռքով բռուի թրթուր հանելը։

Թրթուրը շատ զգուշ պետք է դուրս սեղմել, վոր կենդանու մաշկի տակ չճխլվի։ Յեթե թրթուրը մաշկի տակ ճխլվում է, այնտեղ վերք է գոյանում, վորը յերկար ժամանակ չի լավանում և կենդանուն հյուծում է։ Այսպիսի դեպքերում պետք է դիմել անասնաբուժին։

Դուրս հանած թրթուրը պետք է կամ սատկեցնել (ճզմել) կամ ախտահանիչ հեղուկի (նավթի կամ ֆորմալինի) մեջ գցել։

Թրթուրը դուրս հանելուց հետո անմիջապես պետք է դուրս բերել նաև ամբողջ թարախն ու անցքին յոդ կամ ախտահանիչ վորևե այլ նյութ քսել։

Նկարագրած այս ձևը, ինչպես յերևում է, շատ պարզ է և ամեն մեկը կարող է այն գործադրել, մանավանդ, յեթե նրան

Նկ. 10. Բռուի թրթուրը բռնելու համար գործածվող ունելի։

մեկ անգամ ցույց տրվի ամբողջ գործողությունը։ Այս աշխատանքը կարող են կատարել անասուններին խնամողներն ինքնուրույն կերպով, յեթե նրանք նախապես անասնաբուժերից սովորել են այդ անել։

Թրթուրները դուրս հանելու նպատակով անասուններին պետք է պարբերաբար, ամեն 5 որը մեկ անգամ, քննության յենթարկել, մինչև վոր բոլոր թրթուրները հանվեն։ Յեթե ուռուցքի մեջ ծակ է յերևում, պետք է թրթուրը դուրս սեղմել։ Թրթուրի հասունացման լավ նշանն անցքի մոտ շնչարանները յերևալն է։ Հենց վոր շնչարանները յերևան, կարելի յե առանց վնասելու թրթուրը դուրս սեղմել։ Ժամանակից շուտ, այսինքն՝ յերբ անցքը դեռ չի բացվել կամ դեռ փոքր է, թրթուրը չպետք է դուրս սեղմել։

Նկ. 11. Ուռուցքին դեղ քսելը։

Դեղորայք քսելը.— Թրթուր վոչնչացնելու մյուս լավ յեղանակը ֆենոլ*) քսելն է (նկ. 11)։ Բայց մինչև քսելը վորոշ նախապատրաստական աշխատանք պետք է կատարել—ուռուցքի վրայի մաղը պետք է խուզել, անցքը մաքրել և թարախն անցքից դուրս բերել։ Այս բոլորը կատարելուց հետո փայտե կամ մետաղե փոքրիկ թիակով լոբու չափ քսուք են վերցնում

*) Ֆենոլի քսուքը (մաղ) այսպես են պատրաստում. մի մաս մաքուր ֆենոլ կամ բյուրեղային կարբոլաթթու և 9 մաս վորևե հաբպ կամ վազելին տաքացնում, իրար են խառնում։

ու զգուշությամբ քսում անցքին (նկ. 11)։ Յերկու-յերեք որից հետո նորից պետք է դիտել ուռուցքները և յեթե պարզվի, որ ուռուցքներից որևե մեկի մեջ թրթուրը դեռևս կենդանի յե, նորից պետք է ֆենոլ քսել։ Յեթե յերկրորդ և հետագա ստուգումների ժամանակ ել ծակ ուռուցքներ հայտաբերվեն, դեղ քսելը պետք է շարունակել։

Քսելու գործողությունը հատուկ պատրաստություն ունեցող մարդիկ պետք է կատարեն։

Նկ. 12. Ուռուցքի մեջ դեղանյութ սրսկելը։

Սրսկումը.—Թրթուրը վոչնչացնելու յերրորդ միջոցը սրսկելն է (նկ. 12)։ Սրսկումը կատարում են կամ անասեղ շպրիցով (սրսկիչ), կամ, յեթե շպրից չկա, մեքենայի յուղիչով։

Դեղանյութն ուռուցքի մեջ այնքան են լցնում, մինչև որ լեքը լցվի։

Թրթուրը չվնասելու համար սրսկումն զգուշությամբ պետք է կատարել, որովհետև վնասված թրթուրը կարող է անցքից դուրս չգալ և կաշվի տակ մնալով ուռուցք կառաջացնի, որը կենդանուն մեծ տանջանք կպատճառի։

Սրսկելուց առաջ ուռուցքի շուրջը գտնված մազերը պետք է խուզել ու անցքից թարախը դուրս հանել։

Սրսկելու համար վորպես դեղանյութ գործ են ածում մաքրած կրեոլին կամ տետրաքլորածխածին։ Տետրաքլոր (քառաքլոր) աշխածինը ցնդող նյութ է, այդ պատճառով ել ապակե խցան ունեցող բանկայի մեջ պետք է պահել։

Կրեոլինը թույլատրվում է սրսկել մի կենդանուն վոչ ավելի քան 15 ուռուցքի մեջ, վորովհետև ավելի սրսկելու դեպքում բացասաբար է ազդում կենդանու առողջության վրա։

Կենդանիներին թրթուրներից ազատելու առաջին միջոցը (դուրս սեղմելը) այլ կերպ կոչվում է մեխանիկական, իսկ մյուս յերկու միջոցը (դեղ քսելն ու ներարկելը)՝ քիմիական։ Հաճախ գործ է ածվում, այսպես կոչված՝ կոմբինացված (համակցված) միջոցը, յերբ միևնույն կենդանուն միաժամանակ թե մեխանիկական և թե քիմիական յեղանակներով են մաքրում։ Քիմիական և կոմբինացված յեղանակներով անասունին ամառվա մեջ 3—4 անգամից ավելի չի կարելի մաքրել։

Անասնաբուժական պերսոնալով (անասնաբուժներով և անասնաբուժակներով) ապահովված խորհրդային և կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում բոռի դեմ պետք է պայքարել քիմիական յեղանակով, իսկ մենատնտեսների և կոլտնտեսականների անասունները պետք է մաքրել մեխանիկական յեղանակով։ Այս աշխատանքը կատարում են թե իրենք՝ անասնատերերը և թե հովիվները։

Անասուններին բոռից մաքրելու աշխատանքն սկսելուց առաջ չպետք է մոռանալ, որ բոռի թրթուրների վոչնչացումը բոլոր տնտեսություններում պետք է սկսել միաժամանակ՝ մինչև անասուններին դաշտ դուրս բերելը, այսինքն՝ մինչև թրթուրների դուրս թափվելը։

Յուրաքանչյուր մաքրելու ժամանակ տնտեսության բոլոր անասունները պետք է ստուգվեն, բոլոր վարակված անասունները պետք է մաքրվեն ու բոլոր թրթուրները վոչնչացվեն։

Բոռի թրթուրների վոչնչացման վերոհիշյալ յեղանակների կանոնավոր գործադրման դեպքում կաշվի մեջ առա-

ջացող անցքերը լցվում և լավանում են, կենդանիները դիրանում, կաթնատվությունն ավելացնում են։

Խմբագրության կողմից.—Բացի վերոյիշյալ միջոցներից, կարելի է հանձնարարել անասուններին շոգ ժամանակ կապած պահելու պրոֆիլակտիկ միջոցը։ Պետք է յենթադրել, որ պրոֆիլակտիկայի այս առավել հեշտ միջոցը վարակից զերծ պահելու կատարյալ յերաշխիք չի, բայց վարակի տոկոսն իջեցնում է։ Այս միջոցը գործադրելիս գիշերվա արոտի գործ պետք է կազմակերպվի։ Լենինգրադի զոնալ կայանում կաթնատու անասունների նկատմամբ յեղած պայմաններից ստացված տվյալներն այս կացությունն ապացուցում են։ Գիշերվա արոտի արդյունքն այն է յեղել, որ բուի թռիչքի ամբողջ ժամանակ վարակվելու աստիճանն ու տոկոսը նվազել են, այնինչ մյուս կոլտնտեսություններում, որտեղ այդ միջոցը կիրառված չի յեղել, վարակի ավելացում է նկատվել։ Գիշերվա արոտը տեղի պետք է ունենա սիստեմատիկաբար, ամեն որ, բուի թռիչքի ամբողջ ժամանակ, հարավի պայմաններում՝ մայիսից մինչև ոգոստոս, իսկ Միության միջին գոտու պայմաններում՝ հունիսից մինչև սեպտեմբեր։ Բայց այս միջոցն արդյունավետ է լինում այն դեպքում, յերբ անասունները ծածկի տակ են, յերբ անասունները կապած են պահվում։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության բոլոր աշխատավորները գործով և իրենց փորձով համոզվեցին, որ խորհրդային կառավարության ցուցումներով իրենց ձեռք առած միջոցներն ահագին ոգուտ տվին։

Վերջին տարիներս բոլոր աշխատավորներն իրենց աչքով տեսան ու համոզվեցին, թե մեր յերկրում սոցիալիստական շինարարությունը բոլոր բնագավառներում և մասնավորապես գյուղատնտեսության ասպարիզում ինչպես է աճում ու ծավալվում։ Մենք կենդանի վկաներ ենք հին քաղաքների վերաշինության, նորերի կառուցման, շինարարության և գյուղի ու վերջինիս ողջ կյանքի սոցիալիստական վերակառուցման գործին։

Մեր նվաճումների ասպարիզում ամենաթույլ տեղը անասնապահական բնագավառն է, որովհետև կուլակությունն իր լիկվիդացիայից առաջ, իր վերջին շունչը փչելիս, իշխանությանը գիտակցորեն վնասելու համար, վնասարարարար ահագին քանակությամբ անասուն փչացրեց։ Այժմ մեր ընդհանուր անելիքն այն է, որ անասունների հոտը ոչ միայն քանակապես վերականգնենք, այլև նրա վորակը լավացնենք, անասուններն առողջացնենք։

Մենք պետք է բարձրացնենք անասնապահության արտադրանքի թե քանակը յեվ թե վորակը։ Այս նպատակին հասնելու ուղիներից մեկը բուի դեմ պայքար մղելը, նրա թրթուրները վոչնչացնելն է։

Ուրեմն՝ սե՛ղմ շարքերով համերաշխ պայքար մղենք այդ վնասատուի դեմ։ Բոլորս միասին՝ կոլտնտեսականներս ու խորհանտեսությունների բանվորներս, մենատնտեսներս, անասնաբուժներս ու գյուղական ողջ հասարակայնությունս, համերաշխ զրոհով, միասնական ճակատով պայքարի՛ յելնենք մեր անասնապահության ու կաշվի արդյունաբերության ամենակատաղի թշնամու՝ բուի դեմ։

Համերաշխ, միասնական պայքարով մենք կհաղթենք սոցիալիստական տնտեսության այս ճակատում յեվս, որով յեվ կկատարենք կուսակցության առաջադրանքներն ու կառավարության կարգադրությունները։

Միասնական ճակատով պայքարի՛ յելնենք բուի դեմ։

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԻ ՇՐՋԱՊՈՂՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԳՐԱԾ՝ ԿԱՇՎԻ ԲՈՌԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՍԽԵՄԱՆ

Կաշվի բոռի դեմ շրջանում մղվող պայքարի ընդհանուր ղեկավարությունը դրվում է հողբաժնի վրա։ Շրջանում բոռի դեմ անհրաժեշտ միջոցառումներ գործադրելու անձնական պատասխանատվությունը շրջհողբաժնի ավագ անասնաբուժն է կրում։ Նրա պարտականությունների շարքն են դասվում.

1. շրջանում կատարվող աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը.

2. շրջանում հաշվառումը կանոնավոր կատարելը.

3. աշխատանքի վորակին հետևելը։

Աշխատանքի վորակ ասելով պետք է հասկանալ աշխատանքը ժամանակին սկսելը, կրկնվող դիտումները և անասուններին բոռի թրթուրներից մաքրելու գործը ժամանակին կատարելը, թույլ չտալով, վոր թրթուրներն իրենք դուրս թափվեն, և պայքարի առաջադրած մեթոդների ճիշտ կատարումը։

Անասնաբուժական յենթաշրջանում հակաբոռային կամպանիա կազմակերպելու պատասխանատվությունը դրվում է շրջանային անասնաբուժի վրա։

Յենթաշրջանային անասնաբուժ. աշխատողների պարտականություններն են.

1. նշանակված անձանց հրահանգներ տալը թե կազ-

մակերպչական հարցերի և թե պայքարի միջոցառումների մեթոդների վերաբերյալ.

2. կոլտնտեսական և մենատնտեսական սեկտորներում հաշվառում կատարելու վերաբերյալ հրահանգներ տալը։

3. կամպանիա կազմակերպելու նախապատրաստությունը.

ա) պլան մշակելը.

բ) քիմիական նյութերն ու գործիքները դասավորելն ու բաշխելը.

գ. հատկացրած ու մենատնտեսական սեկտորներում ագիտ-մասսայական աշխատանք կատարելը (խմբակային պարապմունքների ժամանակ, կթվորների, հովիվների, տավարապահների հետ զոոանասնաբուժական գիտելիքներից զրույցներ կազմակերպելը).

դ) բրոշյուրներ ու պլակատներ ուղարկելը.

4. բոռի դեմ մղվող պայքարին մասնակից դարձնել էր շրջանի գյուղական դպրոցների աշակերտներին, պիոներ-ջոկատներին և Պաշըավիաքիմի բջիջներին.

5. կատարել աշխատանքի վորակի և հաշվառման ստուգում։

Անասնապահական սեկցիայի ղեկավարը գյուղխորհրդի մասնաբով պատասխանատու չէ խոշոր յեղջյուրավոր անասունների բոռի դեմ մղվող պայքարի միջոցառումների կիրառման համար։ Նրա վրա յեն ընկնում կոլտնտեսությունների աշխատանքները կազմակերպելու պարտականությունները, հսկողություն սահմանելը, վոր հաշվետու տեղեկագրերը ժամանակին ներկայացվեն և ճիշտ կազմված լինեն։ Անհատական սեկտորի գծով անասնապահական սեկցիայի ղեկավարի պարտականությունն է՝ մենատնտեսների անասուններն ստուգելու և մաքրելու համար հատուկ վայրեր տանելու գործ կազմակերպելը։ Այս աշխատանքը նա կատարում է անասնաբուժական սանիտարների անմիջական մասնակցությամբ կամ նրանց հսկողությամբ։

Յուրաքանչյուր անգամ մաքրելուց ու ստուգելուց հետո անասնատերերին համապատասխան տեղեկանք է տրվում, առանց վորի անասունները չպետք է ընդունել հոտի մեջ։ Տեղեկանքը պետք է ներկայացվի հովվին։

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ մենատնտեսների անասունները մաքրելու գործին հովիվներին մասնակից դարձնելու վողջ կարևորությունը։

Անհատական սեկտորի հաշվետվությունը վարում է անասնապահական սեկցիայի ղեկավարը և բոլոր տվյալները տրվում են գյուղատնտեսական կամպանիաների հաշվառման գործը վարող գյուղխորհրդի լիազորին։

Աշխատանքի վորակի վրա հսկելու պարտականությունը դրվում է անասնապահական սեկցիաների վարիչների վրա։

Անասունները բոռից մաքրելու ձեռնարկումները կիրառելու պատասխանատվությունը դրվում է—քաղաքներում՝ սանիտարական անասնաբուժների, խորհտնտեսություններում՝ դիրեկտորների, կոլտնտեսություններում՝ նախագահների և անհատական սեկտորում՝ անասնատերերի վրա։

Շրջանի ավագ անասնաբուժը կամպանիան սկսելիս կազմակերպական և վերահսկողության հարցերում իրեն ոգնելու համար գործին մասնակից է դարձնում կոմյերիտմիության, կուսամարմինների, Պաշըավիաքիմի և հետևյալ տնտեսական կազմակերպությունների՝ Սոյուզզագոտկոժի,

Սոյուզմյասոլի, Սոյուզզագոտսկոտի և Սոյուզմոլոկոլի տեղական ներկայացուցիչներին։

Յուրաքանչյուր հասարակական և տնտեսական կազմակերպության ներկայացուցչի հանձնարարվում է վարող աշխատանք, որի համար նա պետք է պատասխանատվություն կրի։

Կամպանիան անցկացնելու ժամանակամիջոցում տեղերում անասնաբուժական ցանցին պետք է ոգնեն բոլոր զոոտեխնիկական ուժերը և գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարող մասնագետները ու տեխնիկները։

Բոռի դեմ մղվող պայքարի հաջողությունը սերտ կապ ունի այն բանի հետ, թե մասսաները, հատկապես կանայք, որոնց մեջ բացատրական աշխատանք պետք է կատարել, ինչ չափով են մասնակից դարձված այս աշխատանքը կատարելու գործին։

Ագիտացիոն ողջ աշխատանքը պետք է կատարել հետևյալ ձևով.

1. Ղեկավարող անասնաբուժական անձնակազմը տեղական պարբերական մամուլում, ըստ հնարավորության, լայնորեն ու լրիվ չափով պետք է պարզաբանի այն բոլոր հարցերը, որոնք կապված են հակաբոռային կամպանիայի հետ, և նշի կամպանիայի զարգացման եռապները։

2. Միաժամանակ բոլոր միջոցները պետք է ձեռք առնվեն, որ հասարակության ուշադրությունը կազմակերպվի անցկացվող կամպանիայի հարցերի շուրջը՝ մոբիլիզացիայի յենթարկելով Պաշլավիաքիմի, կոմյերիտմիության, պիոներջոկատների ու գյուղյերիտպրոցների ուժերը։

3. Անասնաբուժ-սանիտարների, բրիգադիրների, կաթնապրանքային ֆերմաների վարիչների դասընթացների, ինչպես և հովիվների, նախրապանների, կթվորների, անասնապահական սեկցիաների անդամների և գյուղխորհուրդների ու կոլտնտեսությունների վորակի տեսուչների, անասնապահական գիտելիքներն ուսումնասիրող խմբակների ծրագրի մեջ բոռի մասին անպայման միքանի պարապմունք պետք է մտցնել։

4. Բոռի մասին զեկուցումներ տալ կուսակցական և կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների նիստերում, կոլտնտեսականների և խորհտնտեսությունների աշխատավորների, ինչպես և մենատնտեսների ընդհանուր ժողովներում։

5. Կազմակերպել լեռորյակներ՝ նվիրված բոռի դեմ մղվող պայքարին։

6. Մոբիլիզացիայի յենթարկել գյուղական ակտիվը և գյուղի աշխատողներին՝ հանձինս ուսուցիչների, գյուղատնտեսների ու աշակերտության։

7. Կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում սոցմրցում կատարել բոռի դեմ մղվող պայքարի կապակցությամբ։

Անասունները բոռից մաքրելու աշխատանքները կատարելիս անասնաբուժական ցանցի բոլոր աշխատողները պետք է ղեկավարվեն բոռի դեմ պայքարելու վերաբերյալ հրահանգով և ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի պարտադիր մինիմումի վերաբերյալ 1935 թվի հունվարի 4-ի № 124 հրամանով։ Մինիմումի պահանջները չկատարողները յենթարկվում են 100 ռուբ. տուգանքի, իսկ չարամիտ դեպքերում մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության։

ԲՈՌԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Բոռի դեմ մղվող պայքարի միջոցառումների հաշվառումը կատարվում է պարտադիր կերպով։ Կոլտնտեսությունները հաշվետվությունն անմիջականորեն ներկայացնում են գյուղխորհրդին ըստ կոլտնտեսական հաշվետվության № 15 ձևի, յուրաքանչյուր ամսի 10-ին, 20-ին և 30-ին։

Խորհտնտեսությունները վերոհիշյալ հաշվետվությունն անմիջականորեն ներկայացնում են հողբաժին՝ յուրաքանչյուր ամսի 10-ին, 20-ին և 30-ին։

Գյուղխորհուրդները, կոլտնտեսություններից ստանալով № 15 ձևի հաշվետվությունները, իսկ մենատնտեսական սեկտորից՝ գյուղխորհրդի այդ սեկտորի լիազորի գրքի տվյալները—հաշվետվությունների բոլոր տվյալներն ամփոփում են № 11 ձևով և ուղարկում հողբաժին՝ յուրաքանչյուր ամսի 1-ին, 11-ին և 21-ին։

Հողաբաժինն իր ստացած տվյալներով կազմում է № 19 ձևի հաշվետվությունը և ուղարկում է Հողժողկոմատ՝ յուրաքանչյուր ամսի 3-ին, 15-ին և 23-ին։

Շրջանային և յենթաշրջանային անասնաբուժական պերսոնալը հետևում է թե ձևերի ճիշտ լրացմանը և թե ցույց տված թվերի ճշտությանը։

Հետազոտման և աշխատանքի վերաբերյալ ժամանակին ու ճիշտ հաշվետվություն ներկայացնելն անհրաժեշտ է.

1. անասունների (հոտի) վարակվածության չափը վորոշելու համար.

2. բոռի զարգացման ժամանակը, իսկ դրա հետ միասին՝ նաև աշխատանքներն սկսելու ժամանակը սահմանելու համար.

3. հետագա պլան կազմելու համար.

4. անցած տարվա աշխատանքի վորակը վորոշելու համար։

ՀԱՇՎԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՅԵՎ ԱՅՆ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՁԵՎԻ ՄԻ ՆՄՈՒՇ

Կոլտնտեսային հաշվային № 15 ձև

Կոլտնտեսություն . . . ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի 34 թ. 2/11—№ 2599 վորոշման հիման վրա։ Հաստատում ենք. ԽՍՀՄ Պետպլանի ՅՈՒՆԽՈՒ-ի պետ՝ Ոսինսկի, ԽՍՀՄ-ի ՀԺԿ Ձերնով։

Գյուղխորհուրդ . . . Տասնորյա

Շրջան . . . . . Ներկայացվում է գյուղխորհուրդ, իսկ ՄՏԿ-ի սպասարկած կոլտնտեսություններից՝ նաև ՄՏԿ՝ յուրաքանչյուր ամսի 10-ին, 20-ին և 30-ին։

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Առ . . . . ամսի 1936 թ.

ՄՏԿ-ն սպասարկում է արդյոք կոլտնտեսությունը (այո, վոչ)

№№ ըստ կարգի	Վնասատուի կամ հիվանդության անունը	Մաքրելու պլանը	Կամպանիայի սկզբից փաստորեն մաքրված և հեկտար, տոն, քառ. մետր, գլուխ և այլն։
1			
2			
3			
4			
5			

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վնասատուի կամ հիվանդության անունը	Հետազոտված և հեկտար կամ քառ. մետր, հատ բույս և այլն	Նրանցից վարակված են	Վարակման միջին խտությունը
1	2	3	4

4-րդ սյունակի վարակման խտությունը պետք է ցույց տրվի մեկ բույսի կամ նրա մասի (տերևի, արմատի, ցողունի և այլն) համար 1 քառ. մետրին, իսկ հողում գտնվող միջատների համար՝ 1/4 քառ. մետրին։

Կոլտնտեսության նախագահ . . . . . հաշվետար . . . . .

Հաշվետվությունն ուղարկելու թիվը . . . . . 1936 թ.

№ 15 ձևի հաշվային քարտը կազմված յերկու տախտակից՝ վերևի և ներքևի։

Հաշվետվության սյունակների լրացման կարգը հետևյալն է.

Վերեվի տախտակ

Առաջին սյունակ.—№№ ըստ կարգի։ Այս սյունակը, անասունները բոռից մաքրելու վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում, նշանակություն չունի և թողնվում է անփոփոխ։

Յերկրորդ սյունակ.—Վնասատուի կամ հիվանդության անունը։ Այստեղ գրվում է, թե քանիերորդ հետազոտումն է։

Յերրորդ սյունակ.—Մշակման պլանը։ Այստեղ ցույց տալ հերթական հետազոտման ժամանակ հայտաբերած՝ վարակված անասունների թիվը։

Չորրորդ սյունակ.—Կամպանիայի սկզբից փաստորեն մաքրված է։ Այստեղ ցույց տալ, թե հերթական հետազոտման ժամանակ հայտաբերված՝ բոռով վարակված անասուններից քանիսն են մաքրված բոռից։

ՎԵՐԵՎԻ ՏԱԽՏԱԿԻ ԼՐԱՑՄԱՆ ՆՄՈՒՇ

№№ ըստ կարգի	Վնասատուի կամ հիվանդության անունը	Մաքրման Պլանը	Կամպանիայի սկզբից փաստորեն մաքրված է հեկտար, տոն, քառ. մետր, գլուխ և այլն
1	Առաջին	188	106
2			
3			
4			
5			

Ներքեվի տախտակ

Առաջին սյունակ.—Նշանակել հետազոտումների հերթական համարները, այն է՝ առաջին, յերկրորդ, յերրորդ և այլն։

Յերկրորդ սյունակ.—Ցույց տալ հետազոտված անասունների թիվը՝ յուրաքանչյուր հետազոտության համար առանձին։

Յերրորդ սյունակ.—Ցույց տալ վարակված մեկ անասունին ընկնող թրթուրների միջին թիվը՝ յուրաքանչյուր հետազոտության համար առանձին։

ՆԵՐԲԵՎԻ ՏԱԽՏԱԿԻ ԼՐԱՑՄԱՆ ՆՄՈՒՇ

Վնասատուի կամ հիվանդության անունը	Հետազոտված և հեկտար կամ խոր. մետր, հատ բույս և այլն	Ներանցից վարակված են	Վարակման միջին խտությունը
1	2	3	4
Առաջին	160	92	12
Երկրորդ	280	164	7

№ 11 ձևի հաշվային քարտի նմուշը

Գյուղխորհրդի հաշվեա, ձև № 11

Տասնօրյակային

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ-ի 34 թ. 7/12 վերոշման հիման վրա։ Հաստատում եմ, ՍԽՀՄ Գեսպլանի ՑՈՒՆԵՈՒ-ի պետ՝ Ոսինսկի։

Ներկայացվում է Շրջհողբաժին յուրաքանչյուր ամսի 1-ին, 11-ին և 21-ին։

Գյուղխորհուրդ . . . . . Շրջան . . . . . .

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Առ . . . . . 1935 թ.

Վնասատուի կամ հիվանդության անունը	Մշակման պլանը հեկտար, տոննն. քառ. մետր, գլուխ և այլն	Կամպանիայի սկզբից փաստորեն մշակված և հեկտար, տոննն, քառ. մետր, գլուխ և այլն
1		
2		
3		
4		

ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վնասատուի և հիվանդության անունը	Հետազոտված և հեկտար, քառ. մետր, գլուխ և այլն	Ներանցից վարակված են	Վարակման միջին խտությունը

Կոլտնտեսությունների թիվը.

ա) հաշվետու ժամկետին տեղեկություն տված . . . . .

բ) անցած ժամկետներին տեղեկագրերով ամփոփման մեջ մտցվածներից . . . . . .

« » . . . . . 1935 թ.

Կոլտնտեսության նախագահ՝ . . . . . .

Քարտուղար՝ . . . . . .

4092

ՅԱՆԿ

Բոռն անասնապահության և կաշվի արդյունաբերության կառաղի թշնամին և 3
Բոռն ինչպես է ապրում և բազմանում 3
Բոռի պատճառած վնասները 10
Բոռի դեմ պայքարելու միջոցները 17
Ցեղրակացություն 23
Լենինգրադի մարզի Շրջհողվարչության գործադրած՝ կաշվի բոռի դեմ մղվող պայքարի միջոցներ կազմակերպելու սխեման 25
Բոռի դեմ մղվող պայքարի աշխատանքների հաշվառումը . . 30

Խմբագիր՝ [redacted], Գ. Սարոյան
Սրբագրիչ՝ Դ-ր. Հակոբյան

Գլավլիտի լիտոգր. Ս—505, հրատ. № 345, պատվ. № 353, տիրաժ 2000
Հանձնված է արտադրության 20 մայիսի 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 13 հունիսի 1936 թ.
2¼ տպ. թերթ՝ մեկ տպ. թերթում 27648 տպ. նշ.
Գյուղհրատի տպարան, Ծաղկաձոր, Նալբանդյան 11

ՀՍՍՀ Հանրային գրադարան

ՀՀ Ազգային գրադարան
NL0289259

ԳԻՐՔ 50 կոպ.

465

8841

ПРОФ. М. А. РЕЙЗМАН

Как бороться с кожным оводом

СЕЛЬХОЗГИЗ 1936 ЭРИВАНЬ